

# ՇԱՌՈՒՄ

Նախակ եւ դրամ դրկեզ  
Խմբագրութեան հասցեի

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна  
Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

«Շարժում»  
Վարնա  
«Charjoum»  
Varna (Bulgarie)  
Պաշտոնական հասցե  
(20 ՍԱՆԹԻՄ)  
Պաշտոնական հասցե  
(15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՔԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

ՔԱՌԱՆՈՒՄ ԱՂՐՈՒԹԻՒՆ  
Պաշտոնական հասցե  
Տարեկան 12 Ձր.  
Վեցամսեայ 6 »  
Արտասահմանի հաս-  
ցեի Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »  
Ամերիկայի հասցեի  
Տարեկան 3 ՏՂ.  
Վեցամսեայ 1.50 »  
ԳԱՆՏԻԿ ՎՃԱՐԵԼԻ  
Պատկերասէպիտոն  
Պատկերասէպիտոն 40 սանթիմ  
Իսկ վերջին երեսի հա-  
ցեի 20 սանթիմ է. երկին  
ակի ակազաներու հասցե  
20 Օլգ զեղջ կըլլայ  
Վառնայի հասցեի 10 սանթիմ

Ստիպողաբար կը խնդրենք մեր բաժանորդներէն, որ պէտք զի բարեհաճին իրենց ներկայ տարուան բաժնեկիները իմբագրութեան ուղարկելու համար: Այս առթիւ կը յիշեցնենք նաեւ անոնց որոնց մասնաւոր նամակները զրկած էինք նախորդ շրջանին բաժնեկիները պահանջելով, թէ այլ եւս առանց ստորագրութեան պիտի հրատարակենք իրենց անունները և հասցէները իբրեւ անբարեխիղճ խաբեբաներու:

## ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Յառաջիկայ ուրբաթ գիշեր, Թատրոն 25ին պիտի ներկայացուի «Նոյն Նոյն» պիսիտի Երկուստեք Ժամանակը

ԿՈՅՐԻՆ ԶԱԽԱՆԸ  
5 արար

Հեղինակութիւն Վիքթոր Հիւկոյի, սղբերգութիւնն տաճկերէն լեզուաւ տեղոյս հայ երիտասարդաց կողմէ, որոնց պիտի մասնակցին անձնուիրաբար նաեւ Պ. Ե. Տիգրան Գ. Յակոբեան:  
«Թիւումի վաճառականը» խիստ ծիծաղաշարժ զաւելտ 1 արար: Պարերգ. — «Հայրենիքի Զատիկը», «Հովիւ և հովուհի», «Նաւաստիք», «Գիւղացիներ»:

## ՍԽԱԼ ԴՐՈՒԹԻՒՆ

«Ես հրատապու եմ չը գնալ և չպիտի ե գնալ»:

Այսօրուան թուով Դարեճի կանանց Բարեգործական ընկերութեան անդամաց արհեստանոցի սանուհիներուն զրկած մէկ բողոքագիրը հրատարակած ենք: Սանուհիները կը բողոքեն իրենց պարտութիւններէն, որ կը մերժէ իր ներկայի ընթացքի մասին աշակերտներուն բացատրութիւն տալ և իր vetoին հինցած անբաւարարելիութիւնը կուզէ սանուհիներուն պարտագրել: «Ես

հրամայում եմ չը գնալ, և չպիտի է գնալ»:  
Սանուհիները չեն երթար, Բայց ո՞ւր. ոչ թէ լսարան, ընթերցարան, ինչպէս կը պահանջէր վարժուհին, այլ արհեստանոց, աւելի գերազանցելով սպառազայէ մը զրկուելով, քան թէ կոյր հպատակները հանդիսանալ անբաւարար կամքի մը: Եւ ուսուցչուհին անշուշտ հիմայ բաւականութիւն ստացած ըլլալու հպարտութիւնն ունի, որովհետեւ իր կամքը առաջ տարած է, քանի մը սանուհիներու ի սպառ հեռացումին պատճառ զառնալով արհեստանոցէն՝ ուր թերեւս ինք տէրլասէ մըն էր:

Սանուհիները իրենց իրաւունքը պաշտպանելու ամէն միջոց ձեռք առնելէ ետքը, կը վճռեն հրատարակ հանել խնդիրը: Ամէն ինչ գեղեցիկ, ինչ վեհ կը հնչէ ըմբոստացումի շնչեր վճռողական, յանդուգն և ձեռնբերից հայ սանուհիներու՝ որոնք իրենց համեստ տարիքին մէջ գիտցած են անկախութիւննին պաշտպանել, իրաւունքնին պահանջել: Ընդհակառակը, որքան ճշմարտ, որքան գժուձ կերեւայ իրենց ուսուցչուհիին անբացատրելի ընթացքը, յիմար վերապահութիւնը արդարացի պահանջքի մը հանդէպ, որ հակառակ ամէն արգելքի, հետզհետէ կուռճանայ, կը զօրանայ և կուզէ անպայման լուրջ ընել իր ձայնը:

Այդ ձայնը մեզի համար ամենէն աւելի գուրդուրանքի առարկայ պէտք էր ըլլար. ան է որ ապագային պիտի կազմէ անկախ ըմբոստ ու գիտակից էակը, պիտի ծնի անհատական «ես» ինքնատիպ ու ստեղծող և քիչ քիչ պիտի գոյացնէ հաւաքական ուժ մը որ ազգին կենսական ուժը պիտի ըլլայ, հպատակութեան լուծիչ ենթակուած ազգերուն ստրկական հակումները չեղաքայքայող: Որքան հպարտաւոր մատուց կամքեր փճացած, քայքայուած են հանգուանտիպ պարսպաներու մէջ, կոշտ ու վայրագ բռնութեան մը հանդէպ չի կրնալով ի-

րենց գոյութիւնը պաշտպանել:  
Մեր այս հրամայական գրութիւնը սխալ է և ցարգ քննարկար հետեւանքներ միայն տուած: Ընչեղով, անպայման ու առանց այլեւայլութեան մեր կամքը աշակերտներուն պարտագրելու զեղով, ոչ միայն չենք հասնիր մեր նպատակին, այլ շատ անգամ հակառակ արդիւնքը կը ստանանք, կը զարագնենք մասնակիները որոնք կը ընդվզին, բռնութեան կը դիմեն տեսնելով որ բռնի ուժի հետ է իրենց գործը, և ուսուցչական հեղինակութիւնը այն առեւն է որ իսկպէս կը ջնջուի: Այլեւս անոնք, անշուշտ անարդար գործի մը մէջ, չեն ուզեր համոզուիլ, հաւաքական ցոյցերու կը դիմեն, քմահաճոյքի տէր մարդիկ կը դառնան և հիմակ ալ իրենք կը պահանջեն որ իրենց խօսքը անպատճառ իրականութիւն գտնէ:  
Ոչ միայն տղան անկախ կամքով մը օժտելու պէտք է աշխատի, այլ չի թողուլ որ անոր մէջ քմայքի, կամայականութեան ունէ որով ըզն զնէ: Եւ նախ պէտք է ուսուցչիները զգոյշ ըլլան կամայական, միապետական ձրգտումներէ, որոնք երբէք վարժարանական յարկին չեն յարմարիր:

Լ. Ս.

## ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Այս 1900—1901 ուսումնական տարեշրջանում զեռ նոյնմբեր ամսուսն էր, որ Թատրիկի Հայուհեաց ընկերութեան խնամքին յանձնուած արհեստանոցի աշակերտուհիներին եւ մեր վարժուհին Օր. Մ. Բոյեախչեանի մէջ խօսակցութեան նիւթ էր դարձնել ընտանեկան դաստիարակութիւնը: Այնքալ կը դաստիարակէր երախտներին մասին փիլիսոփայական եւ բարոյական դաստիարակութեան մասին, ուր ստիպանից առաջ: Այս առիթով Լիւրաւայի դպրոցների անուց Պ. Տիգրան Ռաշաճեանը դիմում է մեր վարժուհի Օր. Մ. Բոյեախչեանի, յայտնելով որ ինքը ցանկութիւն ունի այդ նիւթի մասին խօսակցելու եւ վարժուհին արհեստանոցի օրիորդներին շատ օգտակար գտնելով այդ տեսակ ընտա-

նեկան դաստիարակութիւնների կազմակերպելու, մեզ նախ խորհրդակցութեան մէջ էր մտնել այդ բանն անպատճառ իրագործելու համար:  
Բացի այդ նոյն վարժուհին է եւ զեղ կրկին մեզ առաջարկողը, որ մենք Լիւրաւայի դպրոցների «աշակերտական» գրադարանից գրքերը ընդունինք եւ ընթերցանութեամբ պարագիւրք:  
Նոյն օրիորդը մեզ առաջարկեց եւ պատուիրեց մեզանում, Դարիւղում գոյութիւն ունեցող լսարանական ընկերութեան դաստիարակութիւններին ներկայ գտնուիլ, որից շատ բան կարող էինք օգտուիլ եւ մինչեւ իսկ սպասուում էր պատճել այն օրիորդին որը կը համարձակէր իր տուած պատուէրները չը կատարել:  
Պէտք է աւելցնել որ մեր մէջ պատիւները շատ սովորական էին:  
Մենք արհեստանոցի աշակերտուհիներս ի հարկէ բոլորս էլ համարեա համաձայնեցինք Օրիորդ Բոյեախչեանի բոլոր առաջարկութիւնների հետ, քանի որ երբեք մէջ էլ մեզ համար շատ օգտակար բաներ նկատեցինք: Մինչեւ անգամ վարժուհու առաջարկութեամբ լսարանական ընկերութեան անդամ գրեցին մեզանից շատերը:  
Այսպէս կանոնաւոր կերպով շարունակեց մինչեւ 1901 թիւ մարտ ամիսը երբ Թիֆլիզի լրագիրներից մէկում նամակ պարսկաստանից վերանագրով մի յուլաւ տպուց Ա. Ա. ստորագրութեամբ, ուր շատ ճիշդ կերպով բնորոշուած էր մեր արհեստանոցի ներքին կեանքը և թէ ինչ յարաբերութեան մէջ էր մեզ նախ վարժուհին, ի հարկէ նամակում անւանարկաւ էր ինք վարժուհին, շեշտուած էր նրա ազդեցութիւնը եւ այլն եւ այլն: Ընկերութեան վարչութեան եւ Օր. Բոյեախչեանի կատարողութիւնը պաշտօնակէտին է հասնում չը կարողանալով իրանց վրէժը լուծել յօգուածագիր Ա. Ա. ից, ամբողջ թոյնը թափեցին մեր գլխին:  
Վարչութիւնը իր ժողովներից մէկում գրադարանից այդ նիւթով, նիսաբ վերջանալուց յետոյ բոլոր անդամները նախագահ տիկ. Ամատունու հետ միասին մտան մեր արհեստանոցը եւ նախագահը բոլորի ներկայութեամբ յանդիմանութիւն կարգաց բոլորիս, որպէս թէ մենք ենք եղել այդ յօգուածը շրջու պատճառը եւ սրա նրա վրայ կասկած աանելով դիմեց մեզ հետեւեալ խօսքերով:  
Այուհեաւ զուք իրաւունք չունենաք դրսում, ձեր ուսուցիչներին ծանօթներին, ու բարեկամերին, նոյն իսկ ձեր եղբորը բարեւ տալու, նազանդեցեք ձեր վարժուհուն եւ:

նրա բոլոր հրամանները պետք է ճշտութեամբ կատարէք :

Ձր գիտե՛նք այլևս թէ ինչ պատահեց ինչ չպատահեց, երկրորդ օրը Բոյեակնեանց արհեստանոց մտնելով ասաց բոլորի. «Այսուհետև ձեզ արգիլում եմ յաճախելու լսարանական ընկերութեան դասախօսութիւններին. գրագրանից էլ զիրք չի պիտի վերցնէք. ընտանեկան դասախօսութեան էլ չը յաճախէք» :

Արգիլից նոյնիսկ արհեստանոցի պատուհանները բանայ եւ մենք ստիպուած էինք ժամերով նայիլ ներսուած օդի մէջ. եւ երբեմն երբ օրիորդի բացակայութեան միջոցին մի փոքր ազատ շունչ քաշելու համար բացում էինք պատուհանը. նոյն հիմնարկութեան ծառային իրաւունք էր աւած արգիլելու. եւ ահային հարայ կանչելով գոռում էր մեզ վրայ : Ի՞նչ էր այս բոլորի պատճառ, մնացել էինք չարած, թէ Ա. Ա. ստորագրութիւն կրող յօդւածն է պատճառը, ի՞նչ կապ ունի լսարանական ընկերութեան դասախօսութիւններին, գրագրանի գրքերին եւ կամ ընտանեկան դասախօսութեան հետ :

Այլ եւս տնտանիքի դարձան մեզ համար արհեստանոցի այդ անտեղի, եւ ոչ մի հիմք չուներ խստութիւնները եւ մի օր յօդւածի տակ ստորագրողներս բացառութեան հրաւիրեցինք օրիորդին թէ ի՞նչ պատճառով է մեզ այդպիսի խստութիւններին ենթարկում եւ թէ ինչու մի քանի ամիսներ հէնց իրա վարժուհու կողմից օգտակար համարւած մեր քայլերը որոնց մէջ միշտ ինքն է առաջնորդը, ինքն էլ ներկայ է եղել, ի՞նչ է պատճառը որ մեզ այժմ արգիլում է Եթէ վնասակար են գրանքը չէ՞ որ դուք էլ ներկայ էիք լինում, մեզ ցոյց տէ՛ք այդ բոլորի վնասակարութիւնը եւ մենք ուրախութեամբ կը կատարենք ձեր բոլոր պահանջները :

«Ես արդէն ձեզ ասացի որ չեմ ցանկանում, պատասխանեց վար-

ժուհին. ուրիշ ոչինչ մի բացատրութիւն չուներ ձեզ ասելու. ես հրամայում եմ չը գնաք եւ չը պէտք է գնաք :

«Իսկ եթէ մէկը աւելի ոգտակար է գտնում դասախօսութիւնները, ընթերցանութիւնը քան թէ ձեր արհեստանոցը մանաւանդ, որ այստեղի պարագմունքներին մենք բոլորովին չենք էլ խանգարում, ես ձեր առաջ երկու հարց եմ գնում. ով արհեստանոց է գալիս նա դասախօսութիւններին չը պէտք է գնայ, իսկ ով դասախօսութիւններին երթայ նա չը պէտք է արհեստանոց յաճախէ :

Մենք մեր օգուտը աչքի առաջ ունենալով կը շարունակենք մեր օգտակար քայլերը. քանի որ մինչեւ օրս ոչ մի վնասակարութիւն չենք նկատեր անոնց մէջ, պատասխանեցինք մենք եւ այդ օրւանից թողինք արհեստանոցը եւ հեռացանք : Այլևս չենք յաճախում :

Մի քանի օրից յետոյ գրաւոր բողոք ներկայացրին Բարեգործական Ընկերութեան վարչութեանը, որի մէջ մեր դրութիւնն էին բացատրում եւ բացառութիւն ուղեցինք վարչութիւնից օրիորդի այդ ստեղծ վարժուհուներին համար, յոյս ունենալով որ գոնէ վարչութիւնը մեր արդար պահանջին բաւարարութիւն կուտայ, մեր ցաւին դարձան կանի :

Սակայն մեր բողոքի հետեւանքը այն եղաւ որ վարչութիւնը մի առանձին հրաւերով նիստի կանչեց մեզ եւ մեր ծնողներին, որպէս թէ բացատրութիւն տուաւ եւ անսթէ ինչ եղաւ նրանց առաջին խօսքը : «Մեր բացատրութիւնը այս է որովհետեւ մոռովուրդը բամբասուած է, այդ պատճառով էլ արգիլում ենք ձեզ այդ քայլերն անելու :

— Մենք բամբասանքներին ուշք չենք դարձնում :  
— Հապա ինչի՞ վրայ էք ուշք դարձնում :  
— Մեզ համար սրա նրա բամբասանքները կոպէկի արժէք չունին :

մենք անում ենք այն ինչ որ մեզ համար օգտակար է, բամբասանքները ինչ ուզում են խօսին : Մեր այս խօսքերից յետոյ վարժուհին այնպէս կատաղեց որ նոյն իսկ իր աշակերտուհիներից մէկին բոլորի ներկայութեամբ նարամ անուանեց. որի համար եւ ստացաւ իր պատասխանը :

Անս մեր արհեստանոցից դուրս գալուն իսկական պատմութիւնը, հրապարակ ենք գնում այս խնդրը որովհետեւ մեր արդար պահանջներին ոչ ոք բաւարարութիւն չը տուց, գոնէ յարգելի խմբագրութիւնը հրապարակ հանելով այս խնդիրը արդար պատիժ տւած կլինիք թէ վարչութեան եւ թէ վարժուհուն, որոնք չեն դադրում այս եւ այնտեղ սուտսուտ գրապարտութիւններ տարածելու մեր մասին :

Բայց լուսինը խօս չգիտէ  
Որ իր վրայ հաջողներ կան,  
Նա լուս ու մուշ թակ բոլորած  
Շարունակում է իր ճամբան :  
Արհեստանոցի նախկին  
աշակերտուհիներ  
Աստղիկ Յ. Յովհաննիսյան  
Սարեհիկ Յակոբեան  
Մարգարիտ Աւագեան

Արդէն մեր Ազգ. Բերնիկով անցեալները հաղորդած էինք թէ՛ Իեթերսուրկի մէջ յանձնարարութեամբ մը կազմուած է ծովանկարիչ Այվազովսկիի յիշատակին ալլում մը կազմելու համար : Ըսած էինք նաեւ թէ յանձնարարութեամբ բոլոր ազգայիններու գիմում կընէ, որպէս զի Եթէ հուշակաւոր արուեստագէտին կեանքէն ու է յիշատակարան մը ունին, իրեն հաղորդեն ի գիւրութիւն : Այս անգամ կը հրատարակենք յիշեալ մասնախումբի կողմէ մեր ստացած մէկ յայտարարութիւնը, ցանկալով որ հայ հասարակութիւնը կարո-

ղանայ գնահատել այդ ձեռնարկին կարեւորութիւնը : Յիշեալ թէ քաղաքակիրթ աշխարհը գեռ քանի մը տարի առաջ միայն, Այվազովսկիի իբրեւալլըով ուս արուեստագէտ մը կը ճանչնար, եւ թերեւս մինչեւ հիմա ալ շատեր հաստատած են : Պէտք է ամեն ջանք թափել այս սխալը ուղղելու համար :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
Բացուած է բաժանորդագրութիւն գեղարուեստական ալլումբ յանուն հուշակաւոր նկարիչ պրոֆէսէօր Յ. Այվազովսկու յիշատակին :

Ալլումբը բազկացած կը լինի զուտ նկարչական եւ երաժշտական բաժանմունքներից, երաժշտական մասում ի միջի այլոց գիտեղուած կը լինին զուտ հայկական ժողովրդական երգեր ու պարերգներ, իսկ նկարչականը՝ փոքրագիր երաժիշտներից, էսքիզներից, էսուզներից, վանկաններից եւ այլն. — գուեաւոր, Ֆոտոտիպ եւ ցինկոգրաֆով : Մասնակցում են Ս. Պետրբուրգի գեղարուեստից ճեմարանի բոլոր յայտնի պրոֆէսէօրները նոյնպէս եւ շատ յայտնի երիտասարդ նկարիչներ ու գոմարդատրներ :

Բաժանորդագրութիւնն է արտասահմանի համար իր ճանապարհածախով 8 Ֆր. իսկ տպագրութիւնից յետոյ 10 1/2 Ֆր. նոյն ալլումբը փաստայեղ կազմով 2 1/2 Ֆր. վերագիր :

Բաժանորդագրութիւնը ցանկացողները կարող են գիմել հետեւեալ հասցէով

Ս. Իեթերսուրկի կայսերակազգեղարուեստից ճեմարան,  
Դ. ՕՔրՈՅԵԱՆ  
Խմբագիր հրատարակչներ  
Ե. Բաղդասարեանց  
Դ. Օրոյնյանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐԻՂՃԱՆ, ՈՉ ԿՐ ՍԻՄԵՆ

I

(Շար. Ասիորդի քիւիկ)

— 25'. չէ', կը սխալիս, Մաքէտոնսքի, Թօնջօ Թրալալան, Սարբարի մօտ սպաննեցին, ոչ թէ գիւղի մէջ...

Կամ.  
— Ատ ի վանջօ Կրպաթան էր, ըէվօլէրով... դիտմամբ... ես գիտեմ, որ գիտմամբ Միլէվը սպաննեց, անիծուած ապիբատր ! :  
Կամ.

— Ճիշդ ! — հիմա միտքս կուգայ... Չէրքէզն էր... ոչ թէ Սէլ վէլի Մուսթաֆան... չիտակը առպէս է... ինչալը տեսայ, իրաւունք ունիս, Մաքէտոնսքի ! :  
Կամ.

— Անօկայ ատ աղտոտը ես սպաննեցի : Գիշ մնաց դրօշակը ձեռքէս պիտի ձգէի : Հոն վերաւորած են ինձի :

Եւ ուժգին կը հազար կը հազար ու շնչահեղձ կը լլար :

Յետոյ դարձեալ մտիկ կընէր : Միւս պատմողը բարձր հասակաւ մարդ մըն էր, մանր ու ծաղկի սպիներով ծածկուած դէմքով երկար գորշ պիւերով եւ խորամանկ ու յանդուգն աչերով : Սա առանց կոճակի խոչոր, հնամաշ բալթօ մը կը կրէր եւ Մաքէտոնսքի ահաւոր անունը ունէր : Թուամանիա գալէն առաջ, ոչ ոք անոր անցեալը չէր գիտէր, միայն սաչափը թէ, Մակեդոնիայի մէջ աւազակային խմբի մը վոյվօտան է եղեր : Շատ կարիքի է որ ատ համրաւին պատճառով է որ իր ընկեր հայրուկներու վրայ զգալի ազդեցութիւն կը բանեցնէր :

Անոր կուշտը, թուրքի պէս ծալապատիկ, նստած էր երեսուն տարեկանի մօտ երիտասարդ մը, որուն Հաճի կըսէին, Նիհար, երկար ու դալկանար դէմքով, որ սրածայր մօրուք մը ունէր, Այս դէմքի վրայ յոգնութեան ու սկարութեան արտայայտութիւնը կը տեսնուէր :

Գլուխը ծռած, մրափողի մը պէս կը շարժէր, եւ մէկէն ինքզինքին կուգար երբ ձերը Մաքէտոնսքիի խօսքը կընդմիջէր ու կը հազար :

Հաճիին մօտը ուրիշ երիտասարդ մը նստած էր, սեւ ու ժամանակէն

առաջ ձերացած խորշումած երեսը ածիւրած էր : Սա Մաքէտոնսքիին կը նայէր ուշադրութեամբ, եւ յաճախ մեքենայաբար ձեռքերը բերնէն կուրծքին կը տանէր. կարծես թէ անտեսանելի մօրուքին մազերը կը գիտէր : Քաճանայ էր, եւ Թօթիի խմբին մասնակցած էր : Հիմակ հայրուկ էր, Իրեն Բօրչէթօ (\*) կըսէին : Ոչ պակաս հետաքրքրութեամբ եւ ուշադրութեամբ մտիկ կընէր, խումբին էն զեռատին, գիթէ լակոտ մը, ֆէսով :

Ատ խօսողին բերանաբաց մտիկ կընէր, եւ անյազութեամբ անոր ամէն մէկ խօսքը կը կծէր իսկ երբ անդին ձերն ալ խօսքի կը խուսնուէր, իր ուշադրութիւնը ջերմեանը կը փոխուէր : Եւ իր նայուածքը ձեր հայրուկին դեղին ու նիհարացած երեսին կը դաժէր եւ կը գիտէր, թէ ինչպէս անոր վէրքերէ ու սառապանքներէ խորշումած ճակատը կը կծկուէր : Սոյ քսանամտայ պատանին խանդավառութեան ու անմեղութեան բոլոր գիծերը կը կրէր : Ավիշթօլցի հարուստ վաճառականի մը տղան էր, եւ իր հօրմէն գաղտ

(\*) Բօրչէթօն, Բօր (քաճանայ) բառին փաղաքշականն է :  
Մ. Թ.

նի, խանութը ձգելով, այն գիշը հոն հասած էր, Ինչու, Ինչն ալ չէ գիտեր, Ան պարզապէս իր հայրուկան խանութը ձգած էր, որովհետեւ անոր միօրինակ եղող խաղաղ, պահով կտական գոյութիւնը զգուշիկ եղած իր իրեն. Երազող, իսէալիս ու խօսկան, նորին ու անմանօթի քաղցրութիւնը կուգէր ճաշակել : Եթէ աւելցնենք, որ ան դաղտի գրած ու տպագրած էր սմբողջ հարեասիրական քերթուածներ, զիբաւ պիտի հասկնանք, թէ ինչ մոռցած էր ճանապարհատիսի դրաւանիւն :

Մաքէտոնսքին, որ պատահական ատ գիշեր նաւահանդիստը կը գընուէր, նշմարեց, եւ ծառայած քայլ փոքրիկ սամբակին հետ, եւ իբրաւ գայն Սթրանճային մօտ գիթը ընելու :

Յայտնի է որ, խօսակցութիւնները յեղափոխականներուն կուրծքին ու արկածներուն կը վերաբերէին, որոնք երբեք տարի առաջ Պոլկարիա արշաւած էին : Մեր ու անիկալ գիշերը ատ վաղամեակի սխալ գործով թիւննեցուն ու գիւցաղան կան անկուսիներու յիշատակները մտքը բերելով կը յուզուէր : Կարծես նիկան իրեն ծանր ու անշուք կերպով եւ կուրծքին տակ ալ թոքախ

Յ. Ս. Շումիլա. — Ստացանք ձեր գրութիւնը, բայց կը պաւրանք որ պիտի չկրնանք հրատարակել, նախ՝ որովհետեւ չափազանց երկար է, յետոյ, գրութեան արարար այն պատճառաւ որ չենք կրնար ինչ որ ըլլայ, զուտ քահանայական խնդրի մը մէջ քահանայի մը պաշտպան հանդիսանալ: Մեզի համար պէտք չէ որ այդ մարտիկը հասարակութեան վրայ ունէ ազդեցութիւն գործելու կարող վիճակին մէջ գտնուին, և երբ վորձեն ազդել, երբէք չենք ցանկար որ ունէ կողմէ մը քաջալերութիւն գտնեն: Եւ կը զարմանանք թէ ի՞նչպէս Շումիլայի երիտասարդներ այնքան շերմեանդօրէն պաշտպան կը հանդիսանան քահանայի մը: Եթէ տեղական խնդիրներ կան, ապօրինի ընտրութիւն թաղականութեան, ևն. ինչպէս կըսէք, ձեր ձեռքով կարգադրեցէք զայն, առանց քահանային պէր տալու: Ամենակարող Աստուած թող ստանձնէ իր անիրաւուած պաշտօնեաներուն պաշտպանութեան հոգը: Իրոք եօք այդ սեւ գլուխները իրենց ճիւղալային որովայնէն ի՞նչ գեւական հրճուանքով կորոտան, երբ կը տեսնեն թէ քաղաքի մը հասարակութիւնը իրենց պատճառաւ իրարու գլուխ կը պատռէ, ազգականները իրարու դէմ կը զինուին և հին բարեկամութիւնները անդարմանելիօրէն կը խզուին: Կարծէ՛ք:

Մշակի մէջ կը կարգանք: «Ինչպէս յայտնի է՝ Խաչատուր Աբովեանի որդու ընտանիքը այժմ անապահով վիճակի մէջ գտնուում է: Այդ ընտանիքի համար ներսիսեան գարոցի դրամական միջոցները սահմանուած էր 300 ռուպլի: Երբ երկու տարի առաջ էջմիածնի հոգեւոր իշխանութիւնը խլեց ներսիսեան գարոցից ուխտատեղերի իրաւունքը, նա յանձն առաւ ուխտատեղերի արդիւնքից յատկացնել Աբովեանին ընտանիքին սոյն նպատակը, որ տարիս էր ներսիսեան դրարոցը: Սակայն, Սբովեանի որդու ընտանիքը մինչեւ այժմ ոչ մի կողմէ չէ ստացել և ամբողջ տարիուկէս է որ սպասում է խոստացուած թոշակն ստանալուն, Գարձնում ենք հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնը ներկայ հանգամանքին վրայ: Եթէ նա չէր կարող մի ամենափոքր պարտաւորութիւն յանձն առնել, ինչո՞ւ այնքան հեշտութեամբ խլում էր ուխտատեղիները, որոնք ներսէս կաթողիկոսի օրից գտնվում էին ներսիսեան գարոցի ձեռքին և ենթարկված էին կանոնաւոր տնտեսութեան և հաշվետուութեան»:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Գրոշակի մայիսի թիւին մէջ կը կարդանք թէ Սպաղանքի աւերիչ և Յերոբի սպաննող Պշարի խալի ազան որ Սուլթանէն պատանահան ստացած էր ի վարձատ-

րութիւն կատարած չարագործութեանց, Մուշէն երեք ժամ հեռու Դաշնակցութեան հրոսակներու ձեռքով սպաննուած է իր երկու թիկնապահներուն հետ: Դոյն հրոսակները սպաննուած են նաեւ Սերոբի գաւաճանները՝ Գեղաշէնցի Աւէն, իր աներձագը Եէնըքցի Կարապետ Առքոյեանը և ուրիշներ:

«Արշալոյս» կը ծանուցանէ «Արտէմիս» նոր հանդէսի մը ի մօտոյ երեւումը Դահիրէի մէջ, խմբագրութեամբ Օր. Մառի Պէյլէրեանի, իրեն ուղղութիւն ունենալով հայ իգական սեռին զարգացման նպատակով:

«Ա՛րմէնի» կը գրէ թէ Ֆրանսայի Օամ. դեսպան, Միւնիթր պէյ, նախարարապետ Վալտէր-Ռուսօի գիմում ըրեր է որպէս զի «Մէշլիթէթ» և «Ա՛րմէնի» հրատարակումը արգիւնուի Ֆրանսայի մէջ: Ողորմելին կերեւայ թէ իր կամօր մեծաւորին որչը կը կարծէ կոր ազատ Ֆրանսան:

Բասգովի մէջ մեռեր է մեծահարուստ Լոյսպարոն Բոթրեան: Հանգուցեալը կտակեր է 3,000 ռուպլի Դոր-Նախիշեանի հայոց դպրոցին, 3000 ռուպլի արուեստագիտական դպրոցին, 3000 ռուպլի Հոփսիմեանց օրիորդաց դպրոցին, Գումարը անձեռամխելի պիտի մնայ, իսկ տոկոսովը պիտի պահուին սաներ ու սանուիներ հանգուցեալին անունով:

Մայիս 10ին Թիֆլիսի արգիտական ընկերութեան թատրոնին մէջ ներկայացուեր է Սուրբուկեանցի Պէպօ քովէտին ուն-

սերէն լեզուով: Թատրոնը ծայրէ ծայր լեցուն է եղեր հանգիսականներով: Տիպարները յաջող կերպով պատկերացուեր են: Ներկայացումէն ետքը հասարակութիւնը բեմ հրաւիրեր է Սուրբուկեանցը և շերմ ծափահարութիւններով ողջուներ է զայն:

Թիֆլիսի քաղաքային գուման մայիս 7ին որոշեր է Գեորգ Բարխուդարեանցին յատկացնել տարեկան 6000 ռուպլի թոշակ: Յիշեալը 16 տարիէ ի վեր կը ծառայէ եղեր Թիֆլիսի դպրոցական վարչութեան մէջ և հիմա աչքի տկարութեան պատճառաւ ստիպուած է թողուլ իր պաշտոնը:

Մշակ կը հաղորդէ թէ Շումիլի մէջ անժառանգ վախճաներ է Բարաբէգ Թունիբէգեանց, 70 տարեկան ու անժառանգ: Հանգուցեալին եղբայրները հետեւեալ խոշորնու իրատուութիւններն ըրեր են. թեմական դպրոցին 5,000 ռուպլի անձեռնմխելի, 3,000 ռուպլի նոյն դպրոցին հանդիսասրահը նորոգելու համար, 1,000 ռուպլի Մեղրածոց եկեղեցիին, 500ական ռուպլի Շումիլի երկու օրիորդաց վարժարաններուն, 200 ռուպլի աղքատ աշակերտներու գանձարանին, 400 ռուպլի Շումիլի շորս եկեղեցիներուն, 1,000 ռուպլիի շափ հին գրամներ էջմիածնի թանգարանին:

Հանգուցեալին յուղարկաւորութեան ահագին բազմութիւններ կայ գտնուեր է:

գրութիւնը կը գգար, որ յայտնի էր, յաճախ ու խոսովուած հազերէն. ան ընկերովը պատմութեան ամենաչին անձեղութեան կը գայրանար, կը գտար, և մոլեգնտ կը խոսուէր:

Այս գալուկ գէմքը, հիւանդոտ, չոր, կմախք դարձած մարդը, դրօշակապետ Սթրանճան էր, նոյն ինքն պատկերին մէջ նկարուածը:

Ինքն էր գինետունը բոնողը:

Եւ ատոր համար դեռատի պատանին ատաղի յարգանք ու երկիւղածութեամբ անոր կը նայէր:

II

Երբ որ Մաքէտօնսքին իր պատմութիւնը վերջացուց, ընկերներէն երեքը, որոնք արդէն քնացած էին տեղերին, բաւական «գիմուկով» սկսան խոկալ: Սթրանճան ատ պատմութեամբին վրայ, պահ մը մնաց մտածելու, յետոյ ոտքի ելաւ, հանեց իր քրքրուած ու կեղտոտ բաճկոնը, կարծիք գօտին, որ իր կարծիք, արատներով պիտակաւորուած բանթալօնը կը բռնէր. անոր տակէն քաշեց ըջվոլըրը և պատէն կախեց, Կեցած տնկէն վար իջաւ, որ իրեն նոր ու շատաչող հազեր պատճառեց, գնաց կեցաւ ալ ու հացով դիւս ուրտրեան պատկերին դիմացը. զայն հպարտու-

թեամբ դիտեց, յետոյ գինիի մեծ բարձին բերանը գոցեց, մարեց յամպան և եկաւ տեղը պառկելու: Սա ատենը միւսներուն մօտ կարգաւ պառկած էին Սրբո Մաքէտօնսքին և Սվիթթօյցին: Նկուղին մէջ խաւարը տրեց կատարկապէս:

Շուտով երեք քնացողներու կողմած համերգը աւելի զօրացաւ որտաձայն ու խապտ հոնդիւններէն, և Սթրանճանի նիհար կուրծքի հեւքերէն, Գունը, ժամանակի մը համար կը հոնգատօցնէր այս տառապեալները. մշտապէս հսկողութիւնէ ու անժուժկալութեան քոսացած աչքերը, անկուշտ ստամոքսները, երկարատեւ թափառումներէ տկարացած ու մտշուած (սկիթած) ոտքերը վաղուան օրը, նոր պէտքերու սկզբնաւորութիւն մը պիտի ըլլար, կեանքի, նոր մաքառում երու այս թշուառ ու անհոգ մարդիկներուն համար:

Իրենց հոգին նորէն պիտի թու նաւորուէր, հարուստ ու չառլ կեանքի երեւոյթէն, որ ռուսական գեղեցիկ քաղաքին մէջ իրենց մէն մի քայլափոխին կը հանդիպէր:

Մինչև և երբ պիտի տեսէ իրենց այս թշուառ վիճակը, Ըստար երկրին մէջ ի՞նչ պիտի ընեն, ե՞րբ պիտի տեսնեն իրենց ընտանիքը, սիրելի կիներին ու ծեր մայրերին:

Պուլկարիա ատոնց անջեւ փակուած է, Ռուսանիա կը հիւրընկալէր զիրենք, այն հիւրասիրութեամբը, զոր կուտայ ամայի եղերքը, փոթորիկներէ ջարդուած, խորտակուած ու ալիքներէ նետուած ծովագնացներուն: Իրաւ հասարակութեան, բազմամբխ քաղաքի մը մէջ էին, բայց անապատէ տարրերութիւն չունէր ան: Տուները, խանութները, քսակները անոնց համար փակուած էին:

Մուրացիկներու պէս, ողորմութեամբ կապուէին, ան ալ ամէն ատեն չէ, Սովի օրերը, պարբերաբար կուգային, անխուսափելի ու ճակատագրային: Այո, երբեմն գործ կը գտնէին քանի մը զրուշի, հացը հանելու շափ ամբողջ օրը կաշխատէր: Բայց ատ ալ յաճախ չէր պատահեր Շատ քիչերը համեօտ ու ապահով առեւտուրով մը կրնային դրաղիլ: Կային քանի մը հացագործ, քանի մը գինեպան և քանի մը վաճառական հայուկներ: Բայց փախտականներուն խոշոր զանգուածին, որ յարատեւ կը բազմապատկուէր, ապրուստը կը պակսէր: Չմեռները խիստ ցուրտ կընէր, սրունքները կը գողգողային, և աղիքներն ալ կը գալարուէին: Ռուսական համալսարանի ուսանող մը, որ մօտերս Պուլկա-

րիայէն հալածուած էր, վտիտ ձի մը դնած, Ռախլայի փողոցները տիկով ջուր կը ծախէր: Տիգրանակերտէն փախած երկու վարժապետներ հրապարակի վրայ լիմօնաթա կը ծախէին: Բայց շուտով սպրուստի այդ միջոցէն ալ զրկուեցան, չը կրնալով վճարել քաղաքապետութեան գրած արտօնութեան ծանր տուրքը: Հետեւաբար, անօթութիւնը ու թըշուառութիւնը ամէն կողմէ այս զըժբաղքներուն վրայ կը խուժէին:

Անօթութեան չը մեռնելու համար, երկու բանի ընտրութիւնը կը մնար իրենց, Կամ գէնքով Պուլկարիա քաղաք, Պալքանի մէջ. կամ կախազանի վրայ մեռնիլ և կամ գողութիւն ընել: Բայց թօթիւ իր դափնիներովը կը հանգստանար: Բանաեօթ լաւ օրեր կը վայելէր Սերպիոյ մէջ, իսկ Հաճի Տիմիթրի շատոնց Պուլկուճա մեռած էր, զոր միայն քանի մը գիւղացիներ և արծիւներ գիտէին: Կը մնար երկրորդ միջոցը՝ գողնալը:

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Իսկէնտէրունի թուրք մաքսատան պաշտօնեաները մայիս 16ին ուղեր են արգիլել աւստրիական էօյտի մէկ շոգենաւին Ֆրանսա և Աւստրիա մեկնելիք թղթատարական պայուսակները ընդունելի Աստր վրայ կռիւ մը ծագեր է յատատիներուն և մաքսի պաշտօնեաներուն միջեւ, և թուրք պաշտօնեաները փախեր են:

Ֆրանսական և աւստրիական գեսպանները գոհացում և յանցաւորներու պատժուիլը կը պահանջեն: Բ. Գուռը կաշխատի ինքզինքը արգարացնել առարկելով թէ պաշտօնեաները ժամանակին ստացած չըլլալով հարկ եղած հրահանգները, անհասկացողութիւն մը սեղի ունեցած է:

— Սուլթանը նոր իրատէ մը հաներ է, որով կարգիլէ բոլոր ամերիկեան և ուսական հպատակ հայերուն օսմ. կայսրութեան ու է մէկ մասին մէջ ընակիլ:

— «Բրո Արմէնիա» կը գրէ թէ՛ 8000 պօսնիացի գաղթականներ Փոքր Ասիոյ մէջ հաստատուելու համար յանձնախումբ մը կազմուած է, որուն տրամադրութեան տակ գրուեր է 200,000 օսմ. ոսկի: Յանձնախումբը որոշեր է 2,000 տուներ կառուցանել, որպէս զի նորեկները, իրենց նախորդներուն պէս, իսկոյն սեղացի հայերուն տուններն ու հողերը չի գրաւեն:

— 388 չէրքէզներ Իզմիտէն Սուրիա փոխադրուեր են:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինական կառավարութիւնը տրամադիր կերեւայ իրական բարենորոգումներ մտցնելու երկրին մէջ, որպէսզի ժամ առ ժամ օտար բանակները երկրէն հեռանան: Լի Հունկ Չանկ ընդունած է օտար գեսպաններու բոլոր առաջարկութիւնները սուղանքի մասին, որ 450 միլիօն թաէլ որոշուած էր:

— Գերմանական զօրքերը յունիս 20ին պիտի մեկնին, երկու շաբաթէն Փէքին կառավարութիւնը Լի Հունկ Չանկի պիտի յանձնուի: Բայց այս այս վերջինը չուզեր ու է պատասխանատուութիւն ստանձնել վեց շաբաթէն առաջ:

— Սըր Էտ. Սէթու յայտարարած է չին լիազօրներուն թէ անգլիական զօրքերը չի պիտի մեկնին մինչեւ որ տուգանքի խնդիրը որոշուի և խաղաղութեան դաշնագրին 10րդ յօդուստին գործադրութեան համար հարկ եղած հրովարտակները

հրատարակուին ամբողջ երկրին մէջ:

— Լի Հունկ Չանկի խիստ անակնկալ թուեր է այս յայտարարութիւնը. անիկա կը սպասէ եղեր որ բոլոր օտար զօրքերը պիտի մեկնին նոյնիսկ կայսեր Փէքին գաւառայու մասին վերջնական կարգադրութիւն մը ըլլալէն առաջ:

Լի Հունկ Չանկ հրահանգներ չրկած է կեդր. Չինաստանի խոռվեալ նահանգներուն, պահանջելով որ երկու ամսուան մէջ բոլոր խոռվութիւնները դադրին, յանցաւորները ամենախիստ կերպով պատժուին:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Վալանտ, որ Պրէմաի մէջ Գերմանիոյ կայսեր երեսին երկաթի կտոր մը նետած էր անցեալ մարտին և յիմարանոցի մը մէջ կը պահուէր, քանի մը օր առաջ բանտ փոխադրուեր է ուր վեց բժիշկներու կողմէ մանրակրկիտ քննութեան մը պիտի ենթարկուի, Լայքցիկի բարձրագոյն ատեանին պահանջքին վրայ:

— Գերմանական «Նուվէլ տը Համպուրկ» թերթը մատնանիշ կընէ գերմանական քաղաքականութեան վտանգները Թուրքիոյ և Փոքր-Ասիոյ մէջ: Այս քաղաքականութիւնը պիտի խոռվէ Գերմանիոյ և Ռուսիոյ յարաբերութիւնները:

Ա Ն Գ Ի Ի Ա

Էտուարտ է. կայսրը տեսնելով որ կառավարութեան զանազան ներկայացուցիչներ կարգ մը հրատարակութեանց դէմ կը փորձեն իր անձը պաշտպանել աւելի եռանդով քան խոհեմութեամբ, բացատրեր է այն ծանր անպատեհութիւնները որոնք կրնան յառաջ գալ յարձակող թերթերը խաղանքով կամ հրատարակիչները դատի ենթարկելով: Էտուարտ է. չուզեր որ այդ պատճառաւ ու է մէկը զոհ ըլլայ: Ինք հասարակութենէն ոչ թէ հասարակաց զօրութենէն կը սպասէ ազգային յարգանքը և ժողովուրդին սէրը:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Չորս հարիւր պօէր մայիս 25ին յարձակեր են անգլիական խումբի մը վրայ և վեց ժամ ընդհարումէ ետքը, ետ մղուեր են: Անգլիացիք 6 սպաննուած և 20 վիրաւոր ունեցեր են, պօէրները 6 սպաննուած և 30 վիրաւոր:

— «Տէլլի Մէլլ» կիմանայ թէ Պօէրները Գոլպէրկի մօտ յափշտակեր են 500 ձի: Անգլիական թերթերը ասիկայ կատար-

եալ ազէտ մը կը նկատեն, ոչ միայն անոր համար որ ձիեր գտնելը հետզհետէ կը դժուարանայ, այլ որովհետեւ գրաւուած ձիերուն իւրաքանչիւրը հեծեալ պօէր մը կը նշանակէ, պատարաստ կռուելու:

— Նոր տեղեկութեանց համեմատ Պօթա իր մարդիկը, ինչպէս նաև պօէր կառավարութեան անդամները էրմէլօի արեւմտեան կողմը երեւցած են: Պօթա երկու թնդանթ ունի եղեր:

— Մինչեւ մայիս 25 Գարի մէջ 666 մահ պատահած է ժանտախտէ: Բորդ էլիզապէթի մէջ համաճարակը ծաւալ գտած է:

— Բրօք. Հարիսըն Տէլլի Նիւլի մէջ նամակով մը սաստկօրէն յարձակում գործած է կառավարութեան և Լօրտ Միլնէրի վրայ: Մասնաւորապէս շեշտած է անգլիական զօրքերուն կատարած անբարոյնքը ազարակներու մէջ, քանզաւ բազմաթիւ տուները, որով հազարաւոր ընտանքները անպատասպար մնացած են: «Սիւկայ քաղաքակիրթ պատերազմին ընդունած օրէնքներուն բռնաբարումն է, և Լահէի գեսպանախորհրդին մէջ հանդիսաւորապէս արգիլուած էր, յայտարարեր է բրօք. Հարիսըն: Անարգ գործ մըն էր ասիկա մասնաւորապէս անոր համար որ, գործադրուած էր անոնց գէմ ու ըտնք իրենց երկրին գոյութիւնը պաշտպանել կը ջանային»:

Հարիսըն այսպէս կը վերջացնէ իր նամակը:

«Հիմա պատերազմը վերջացած է, կը յայտարարեն նախարարները, զօրավարներն ու թերթերը: Մէնք այս անպարկեշտ սուտերը յուզումով կը կարդանք, որովհետեւ կը մտածենք որ սարսափի ու բարբարոսութեան նոր թուականի մը սկիզբը կը վերաբանայ ան: Բայց կռիւը չէ վերջացած, հակառակ կայսրութեան գրուած մահացու հարուածին, հակառակ հասարակաց կարծիքին մէջ ներարկուած թոյնին, հակառակ Անգլիոյ պատուոյն փակցուած արատին: Եւ յետոյ ուրիշ բան մըն ալ կայ որ չէ վերջացած. այն է պօէրական ազգը, որ գեռ չէ ջախջախուած և որ—Իբրեւ Անգլիացի հայրենասէր կը մպթեմ—բրեք պիտի չի ջախջախուի»:

Ի Տ Ա Լ Ի Ա

Անգլիական թերթերը կը ծանուցանեն թէ Կաթոլիկ ոստիկանութիւնը մարդ մը ձերբակալած է, որ կըսէ եղեր թէ Պրէշի ոչ թէ իր բանտին մէջ անձնապան եղած է, այլ բանապանի մը ձեռքով սպաննուած է:

Չերբակալուած անձը ճշգրիտ տեղեկութիւններ տուած է. և

յայտարարած է թէ այդ տեղեկութիւնները առած է Սան-Սթեֆանօի բանտին ուրիշ մէկ պահապանէն:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Պաքու, նախարար Պիպի Էնպաթ ընկերութեան հորերուն մէջ հրգեհ ծագելով 30,000 փութ նախարար է: Վնայ 150,000 բուպլի կը հաշուուի:

— Իսալիոյ, Սերպիոյ թագաւորները և Պուլկարիոյ իշխան օգոստոս ամսուն մէջ Ռուսիա սպասուին:

— Չարին անդրանիկ աղջիկը Օլկու Նիքօլաէվա, որ վեց տարեկան է, ծանրապէս կը տուժէր: Ուսուցիչ թիֆօի հիւանդութենէն կատարուած է:

Գ Ա Լ Ո Ւ Ս Մ Ա Ր Տ Ի Ո Ս Ե Ա Ս

Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր

(Ողիցս «Ձար Պօրիս»)

Կը պատրաստէ ամեն ձեւով ընտիր ճաշերով կօշիկներ, յանդարութիւնները փութով և սուճալութեամբ կը կատարուին: Հարկ խնդրուի յարգոյ յանձնարարութեան որ անգամ բարեհաճ ձեւ փորձել մեր կօշիկները, համոզուելու համար անոնց դիմաց կուլեան ու ճաշակուորութեան:

Գիները խիստ դիւրամատչելի վճարմանց դիւրութիւններ տրուին:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Sof. v. Snsmlsuegh և Ե. Թոնիսմով «Die sozial-ökonomisch Tirscei» Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարցի և ընդհանրապէս թուրքալի մասին: Գիւնը 2 մարկ ճանապարհածախով գիմիլ Berlin, Verlagshandlung R. Prager, №W. 7

Ի Մ Ա Ս Կ Ր Ո Ւ Թ Ի Ի Ի «Պ Ր Թ Ո Ւ Մ Ա Ի»

Կը տպագրուին ամէն լեզուով ալ յոյսերով, հասցէստմս, նամատր կազմուի, հարսանեկան հրատարակիչ, մահալը:

Գիները յոյժ դիւրամատչելի ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

ՈՒՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՔՆԵՐ

ОТГОВОРНИКЪ:

Д-ръ М.Ж.ЖРДИЧЪ ВАРНА

Печ. Взаимность — Варна.